ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«29 » հոկտեմբերի 2021 թվականի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53

ՀՈՂԱՄԱՍԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2021թ ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 5 և 6.1 կետերով, հաշվի առնելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված 27.10.2021թ. N Կ-27102021-06-0045 տեղեկանքը և Սարահարթ համայնքի բնակիչ Թամարա Զուլալյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Կադաստրային քարտեզում կատարել ուղղում՝ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-097-0131-0055 կադաստրային ծածկագրով հողամասի սուբյեկտը ուղղել՝ համայնքայինից քաղաքացի, գործառնական նշանակությունը՝ արոտավայրից վարելահող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

29 հոկտեմբերի 2021թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 54

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներից, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

որոշում եմ.

1. Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097-0127-0116 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.9718 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը հասցեավորել Շիրակի խճուղի թիվ 3:
2. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ղեկավարի 2021թ հոկտեմբերի 20-ի թիվ 49 որոշումը :
3. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 55

29 հոկտեմբերի 2021թ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Հողային օրենսգրքի>> 5-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Սարահարթ համայնքի ավագանու 2021թ հոկտեմբերի 29-ի թիվ 46 որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-097-0127-0116 ծածկագրով 0.9718 հա բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի 06-097-0127-0116 ծածկագրով 0.9718 հա բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը համարել որպես առանձին միավոր:
3. Դիմել ՀՀ կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:
4. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ղեկավարի 2021թ հոկտեմբերի 20-ի թիվ 50 որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 56

«29» հոկտեմբերի 2021թ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով , և առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու 2021թ-ի հոկտեմբերի 29-ի թիվ 39-Ն որոշմամբ

Որոշում եմ

1. Հաստատել Սարահարթ համայնքի 2021թ.-ի բյուջեի եկամուտների, ծախսերի և ծախսերի նախահաշիվների եռամսյակային բաշխումը՝ համաձայն 1, 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2021թ մարտի 12-ի թիվ 16 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *06801657*